

# ԽՈՉՈՒԿԸ ԹԵՒԵՐ ՈՒՆԻ



# ԿԿՈՒ Մանկապատանեկան Թերթիկ

ՅՈՒՆՈՒԱՐ Գ - 2024  
Թիւ 3



Թիւր պատրաստեց՝  
Մարտին ԱՐՄԵՆ-ՇԱՀԻՆԵՆ  
Նկարազարդեց՝  
ՌԱՅՅԻ ՔԵՇԻՇԵՆ

Ժամանակին Յենրի անունով խոզուկ մը կ'ապրեր ագառակի մը մէջ: Ան շատ փառասէր էր: Անոր ամենամեծ փափաքը թռչիլն էր:

- Ես պետք է թռչիմ: Ինչո՞ւ պիտի չկրնամ թռչիլ: Եթէ թռչունները կը թռչին, ուրեմն ես ալ պետք է թռչիմ,- ըսաւ Յենրին ինքնիրեն:

Ան շուտով միտք մը յղացաւ եւ երեւակայեց թէ թռչունի թելեր ունի: Այդ օրուրնէ սկսաւ թռչուններուն փետուրները հաւաքել: Ան հազիւ տեսներ որ թռչուն մը իր փետուրները կը ձգէր, անմիջապէս կ'երթար ու կը հաւաքէր զանոնք: Այսպէս՝ մինչեւ որ ան շա՛տ-շա՛տ փետուրներ ունեցաւ: Բոլորը իր մարմնին վրայ տեղաւորելով, ան խոշոր, գիրուկ եւ տարօրինակ թռչունի մը նմանեցաւ:

- Այս փետուրները պետք է օգնեն զիս թռչելու: Հիմա կրնամ յաջորդ քայլը առնել,- խորհեցաւ ինքնիրեն:

Հենրիին ընկերներէն մէկը՝ Մուսին, նկատեց որ ան գաղտնի բան մը կը փորձէր ընել: Մուսին տեսաւ, որ Յենրին դարակէն խեժ մը կը հանէր: Ան Մուսինն պատմեց, որ կը փորձէր գիւտ մը ընել եւ օդը բարձրանալ ու թռչիլ: Մուսին փորձեց զինք համոզել, որ այդ մէկը անկարելի էր: Սակայն



Հենրի յամառ էր: Ան ընկերոջ ըսաւ, որ վաղը առաւօտեան բլուր ժամանէ ու դիտէ զինք:

Յաջորդ օր բոլոր կենդանիները հաւաքուեցան՝ տեսնելու Յենրին, որ դէպի երկինք պիտի թռչէր: Յանկարծ ձայն մը լսուեցաւ.

- Հենրի՛, խնդրե՛մ, մի՛ ըներ այդպէս: Կը մեռնիս, կեցի՛ր, Յենրի՛, ես չեմ ձգէր, որ...,- ըսաւ Մուսին:



- Հեռացի՛ր, մո՛ւկ: Չիս մի՛ կեցնէր,- պոռագ Յենրի եւ հրեց իր ընկերը:

Խեղճ մուկը գետին ինկաւ:

Հենրի հազիւ սկսաւ թելերը շարժել վեր բարձրանալու համար, յանկարծ թռչելու փոխարէն վար ինկաւ եւ ուժգնօրէն գետին զարնուեցաւ: Հենրի քանի մը ակնթարթի մէջ հասկցաւ, թէ ինչո՞ւ Մուսին իրեն կ'ըսէր, որ չփորձէ թռչիլ: Բայց հիմա արդէն ուշ էր: Ան շունչը կտրած գետին ինկաւ:

Հենրին ե՛ւ Մուսին իրենց կեանքը կորսնցուցին. Հենրին՝ իր յիմար ցանկութեան, իսկ Մուսին իր յիմար ընկերոջ պատճառով:

Այս պատմութենէն կը հասկնանք, որ եթէ մարդիկ մեր բարի խրատները չուզեն լսել, անել կացութեան կը մատնուին:



Կրնա՞ս գտնել տարբեր պատկերը:











Կրնա՞ս 7 տարբերություններ գտնել երկու պատկերներուն միջև:

Կրնա՞ս գտնել կորսուած առարկաները:



Կրնա՞ս լուծել:

$\begin{array}{r} 49 \\ +17 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 67 \\ +23 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 44 \\ +37 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 39 \\ +16 \\ \hline \end{array}$	
	$\begin{array}{r} 44 \\ +48 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 75 \\ +15 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 33 \\ +55 \\ \hline \end{array}$	
$\begin{array}{r} 25 \\ +17 \\ \hline \end{array}$			$\begin{array}{r} 38 \\ +66 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 27 \\ +57 \\ \hline \end{array}$
$\begin{array}{r} 24 \\ +58 \\ \hline \end{array}$		$\begin{array}{r} 27 \\ +66 \\ \hline \end{array}$		$\begin{array}{r} 29 \\ +36 \\ \hline \end{array}$
$\begin{array}{r} 24 \\ +58 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 34 \\ +27 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 23 \\ +49 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 29 \\ +36 \\ \hline \end{array}$	
$\begin{array}{r} 19 \\ +56 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 19 \\ +56 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 23 \\ +49 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 74 \\ +17 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 74 \\ +17 \\ \hline \end{array}$

# ԱՐԾԻՒՆ ՈՒ ԲՉԷՉԸ

Արծիւը ինկաւ նապաստակին ետեւէն, որպէսզի գինք որսայ: Նապաստակը տեսնելով, որ ոչ մէկ տեղէ օգնութիւն կայ, դիմեց իր դէմ գտնուող միակ արարածին՝ աղբի բզեզին:

Բզեզը նապաստակին սիրտ տուաւ ու իր առջեւ կանգնած արծիւը տեսնելով, խնդրեց անկէ որ չորսայ գայն:

Բայց գիշատիչը նոյնիսկ ուշադրութիւն չդարձուց չնչին պաշտպանին եւ նապաստակին վրայ յարձակեցաւ: Բզեզը այդ վիրաւորանքը չմոռցաւ: Ան սորվեցաւ արծիւին բոյնին տեղը եւ ամէն անգամ որ արծիւը հաւկիթ ածեր, կը բարձրանար, հաւկիթները բոյնէն դուրս կը գլորեր ու կը ջարդեր գանոնք:

Արծիւը ոչ մէկ տեղ հանգիստ գտնելով ապաստան փնտռեց բուին մօտ եւ խնդրեց ապահով տեղ մը տալ իրեն, որպէսզի հաւկիթներ ածէ:

Բուն արծիւին արտօնեց, որ հաւկիթները իր ծոցը դնէ:

Այդ տեսնելով բզեզը կլորեց աղբի քուրճը, թռաւ հասաւ բուին մօտ, եւ քուրճը ձգեց իր ծոցը: Բուն նստած տեղէն վեր թռաւ, որպէսզի աղբը իր վրայէն թափէ, իսկ արծիւին հաւկիթները վար ինկան...

Կ'ըսեն, թէ այդ օրէն ի վեր, երբ աղբի բզեզները դուրս կու գան, արծիւները բոյն չեն շիներ:

Այս առակը ցոյց կու տայ, որ ոչ ոք պէտք է արհամարհել, որովհետեւ անհկա երբ վիրաւորուի՝ անպայման իր վրէժը կը լուծէ:





## ԻՆՉՈ՞ՒՄ ԿԸ ԿԱՐՄՐԻՆՔ

Մենք երբ ճիգ կը թափենք, կը յուզուինք կամ նեղուած ու յոգնած կ'ըլլանք, մեր սիրտը աւելի արագ կը տրոփէ: Մեր արեան երակները կ'ընդլայնին, որպէսզի արիւնը կարենայ աւելի արագ շրջիլ: Դեմքին երակները մաշկին մօտը կը գտնուին, այդ պատճառով ալ մեր այտերը կը կարմրին:

## ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ Ո՞Վ ՕԴԱՆԱԻՈՎ ԿՏՐԱԾ Է ԱԹԼԱՆԹԵԱՆ ՈՎԿԻԱՆՈՍԸ

Ամերիկացի օդանաւորդ Չարլզ Լինտպըրի իր պզտիկ օդանաւով, որ կը կրէր «Սփիրիթ օֆ Սենթ Լուիս» անունը, Նիւ Եորքը (Միացեալ Նահանգներ) Փարիզին կապեց՝ մօտաւորապէս 33 ժամէն աւելի քան 5800 քիլոմէթր թռչելով: Այս իրագործումը տեղի ունեցաւ 21 Մայիս 1927-ին (97 տարի առաջ):

